



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝** Ցեղասպանության թեմայի արձարծոււմը նորագույն շրջանի  
հայ գրականության մեջ

**ԱՌԱՐԿԱ՝** Հայ գրականություն

**ՀԵՂԻՆԱԿ՝** Քոչարյան Լիլիկ

**ՄԱՐԶ՝** Արագածոտն

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝** Ապարանի ֆիզմաթ  
ավագ դպրոց

## Բովանդակություն

Ներածություն .....	2
Ոգեղեն և իրական հայրենիքի որոնումների խաչմերուկներում .....	6
Կորցրած հեքիաթի որոնումների ճանապարհին .....	10
Ցեղասպանությունից մինչև Արցախյան հերոսամարտ .....	20
Եզրակացություն .....	23

## Ներածություն

Հազարամյակների պատմություն ունեցող հայ ժողովրդի պատմական ուղին լեցուն է ն՛ հերոսական, ն՛ ողբերգական էջերով, սակայն տասնիններորդ դարավերջը և հատկապես քսաներորդ դարասկիզբը օրհասական եղավ հայության համար: Իր բնիկ հայրենիքում ապրող հնագույն մի ժողովուրդ ցեղասպանվեց սեփական բնօրրանում: Պետական մակարդակով կազմակերպված և իրագործված այդ՝ նմանը չունեցած ոճրագործությանը զոհ գնաց հայ ժողովրդի մեծագույն մասը, իսկ նրա մազապուրծ բեկորները ցրվեցին աշխարհով մեկ՝ ձևավորելով հայկական Սփյուռքը: Հայկական գաղթօջախները տարբեր երկրներում ձևավորվել էին շատ ավելի վաղ ժամանակներից. պետականությունից զրկված հայը հաճախ է ստիպված եղել կյանքի և ապրուստի ապահովություն փնտրել ուրիշ երկրներում, բայց օտար ափերում անգամ հայը փորձել է անաղարտ պահել իր ինքնությունը՝ ստեղծելով կղզյակ-համայնքներ: Սակայն Սփյուռքը որպես այդպիսին առաջացավ Մեծ եղեռնից հետո, երբ ցեղասպանությունից փրկված հայությունը ցրվեց աշխարհով մեկ: Առնվազն մեկուկես միլիոն մարդկային կորուստը ցեղասպանության առաջացրած միակ հետևանքը չէր. հայ ժողովուրդը հայրենագրկվեց՝ զրկվելով իր պատմական հայրենիքում ապրելու օրինական իրավունքից, ունեցավ նյութական և հոգևոր արժեքների անդառնալի կորուստ: Սրի քաշվեց արևմտահայ մտավորական սերունդը, արևմտահայ գրականությունը ըստ էության դադարեց գոյություն ունենալ: Պատահական չէ, որ Հակոբ Օջականը գրում է. «Ինձի համար արևմտահայ գրականությունը կը հասնի մինչև 1915 թվականը»: Սակայն այդ անհնարին նախաճիրն անգամ չկարողացավ սպանել հայ մարդու ապրելու կամքը: Արևմտահայ գրական միտքը իր շարունակությունը ունեցավ արդեն որպես սփյուռքահայ գրականություն: Արմատներով և ավանդներով կապված լինելով արևմտահայ գրականությանը՝ սփյուռքահայ գրականությունը էականորեն տարբերվում էր նրանից իր առջև դրված խնդիրներով ու նպատակներով:

Միամանթոյի «Ամբողջական գործ» ժողովածուին նվիրված հոդվածում ցեղասպանությանը գոհ գնացած արևմտահայ տաղանդավոր գրող Տիգրան Չոկյուրյանը գրում է. «Ամեն գրական գործ, ավելի կամ պակաս, կներկայացնէ միջավայր մը, որուն մեջ, սաղմներ սներ ու արտահայտվեր է: Միջավայրին պատմական ցավագին և եղերական կամ զվարթ ցնցումները իրենց որոշ երկարաձգությամբ կառաջացնեն արվեստագետներու կարգ մը, որոնք կդառնան ներկայացուցիչը, կերպով մը պատմագիր իրենց ժամանակամիջոցին, անոր անձկության, հույսին, անսանձ զվարթության կամ բարոյալքման» (Հայ դասականների գրադարան, Տ. Կամսարական, Տ Չոկյուրյան, Երկեր, Երևան, 1984, էջ 560): Իրոք, արվեստագետը, ճշմարիտ մտավորականը չի կարող անտարբեր լինել իր ժամանակի խնդիրների, ժողովրդի ցավերի նկատմամբ: Ժամանակն ինքն է ձևում իր հերոսին, իր արվեստագետին: «Ամեն մարդ ունի նայվածք: Բայց արվեստագետը նա է, ով ունի նաև հայացք (այս բառի փիլիսոփայական իմաստով), մի հայացք, որը պիտի նետված լինի ոչ միայն աշխարհի վրա, այլև իր կերած հացի, որքան մարդկության ճակատագրի տառերի վրա, նույնքան էլ փողոցային ցուցանակների,-գրում է Պարույր Սևակը «Հանուն և ընդդեմ «ռեալիզմի նախահիմքեր»-ի» հոդվածում: Իսկ ով ունի այդ հայացքը, արդեն փնտրում է ոչ թե կյանք, այլ կյանքի իմաստ: Նման մեկը չի կարող չհասկանալ, որ ոչ թե գրողն է ստեղծում իր խնդիրը, այլ խնդիրն է ստեղծում իր գրողին» (Պարույր Սևակ, Երկերի ժողովածու վեց հարյավ, հ. 5-րդ, էջ 270): Թերևս հենց ժամանակն էր պատճառը, որ ի սկզբանե սփյուռքահայ գրականությունը զարգացավ երկու ուղղությամբ: Մեկը կարոտի գրականությունն էր, որի նպատակն էր վառ պահել կորուսյալ հայրենիքի մասին հիշողությունները, ոչ թե հաշտվել ֆիզիկական կորուստի հետ, այլ անցյալի երազային պատկերներով վառ պահել հոգևոր հայրենիքի պատկերը, մյուսը՝ նահանջի գրականությունը, որ ահագանգ էր հնչեցնում ձուլման վտանգի առջև կանգնած հայության համար: Ուժացման ահագնացող վտանգը առաջինը ազդարարեց Շահան Շահնուրը, ապա՝ Հրաչ Զարդարյանը, Զարեհ Որբունին և ուրիշներ: Օտար ափերում հայտնված հայի համար

հույս ու ապավեն էր պատմական հայրենիքի այն փոքրիկ հատվածը, ուր ձևավորվեց ու պահպանվեց, թեկուզ ձևականորեն, հայոց պետականությունը: Արևմտահայ, ապա նաև սփյուռքահայ հայտնի գործիչ Ա Արփիարյանը Բաֆֆոն նվիրված գրական դիմանկարում գրում է. «Ներկա պայմաններուն մեջ ուրիշ ոչինչ ունին հայերը, բացի այժմու Հայաստանեն, և Բաֆֆին ու Միքայել Նալբանդյանը ուրիշ բան չպիտի ըսեին, եթե ողջ ըլլային հիմա, ոչ միայն այդ գոյություն ունեցող պետությանը թանկագին է մեզի համար, այլև հակառակ բոլոր գանգատներուն, զոր կրնար ունենալ Խորհրդային Միության վարչաձևին այս կամ այն սկզբունքներուն մասին, այդ Հայաստանին Խորհրդային Միության մեջ մնալը, անոր վրա կրթընելով իր գոյությունը ապահովելը անվիճելի անհրաժեշտություն է: Գոյություն ունեցող այդ փոքրիկ պետությունն է, որ իր ապագա զարգացմամբ, զորացմամբ, ընդլայնմամբ կառավարական սիստեմին. քաղաքական ու ընկերական բեժիմին՝ ընդհանուր Խորհրդային Միության իսկ անխուսափելի բնաշրջման հետևանքով՝ բնականոն ձևի մը մեջ մտնելովը, Վարդանին երազը պիտի հետզհետե մոտեցնե իր ավելի լիալիր չափով իրականացման» |(Չոպանյան Արշակ Երկեր, Երևան, Սովետական գրող, 1988, էջ 727):

Միանգամայն տարբեր, մի փոքր անհասկանալի, հակասական իրավիճակում հայտնվեցին արվեստագետները Խորհրդային Հայաստանում: Ձևավորվելով ազատ ու անկախ հայրենիքի գաղափարախոսությամբ՝ նորագույն շրջանի հայ գրականությունը շուտով ենթարկվում է պրոլետարական բռնատիրությանը, որը բերում էր ժողովրդին ջլատող ապագային քարոզչություն: Այդ դիրքերից պրոլետգրողները ժխտում էին անցյալի գրականությունը, հինավուրց տաճարների հետ մեկտեղ հողին էին հավասարեցվում ազգային բոլոր արժեքները: Ավելին, մարդկանց փորձում էին զրկել անգամ հիշողությունից. Հող, հայրենիք, ընտանիք ու հարազատներ կորցրած մարդու կարոտն անգամ դատապարտվում էր, համարվում «եղբայրական թուրք ժողովրդի» դեմ ոտնձգություն: Քաղաքական բռնություններին զոհ գնացին շատերը. 1915-ից ընդամենը 20 տարի անց հայ մշակույթը դարձյալ գլխատվեց՝ 1936թ. օգոստոսի 9-ը դարձնելով նոր ապրիլի 24: Ուստի միայն 50-

ականների կեսերից սկսված որոշակի ազատականացման պայմաններում հնարավոր դարձավ, թեկուզ բավական զգուշավորությամբ, արժարձել ցեղասպանության և նրա հետևանքների հարցը: Արձակում թեմային անդրադարձան Խաչիկ Դաշտենցը, Սերո Խանգադյանը, չափածոյում՝ Պարույր Սևակը, Գևորգ Էմինը, Սիլվա Կապուտիկյանը: Քսաներորդ դարի վերջին տասնամյակներում ասպարեզ իջավ գրողների նոր սերունդ, որն արդեն չէր տեսել ցեղասպանությունից մազապուրծ փրկվածներին և այդ արհավիրքի մասին կարող էր պատկերացում կազմել մեծերի կողմից շշուկով, վախվորած արված պատմություններից: Թվում էր՝ հեռացող ժամանակը պիտի մթագներ հիշողությունը, մոռացության մասներ կատարված իրողությունը, բայց ամենագոր ժամանակը ադամանդի նման հղկում ու փայլեցնում է ճշմարտությունը՝ զտելով ավելորդ մանրուքներից, թողնելով ամենակարևորը:

Հետագոտական աշխատանքի նպատակն է բացահայտել ցեղասպանության հետևանքները և արտացոլումը նորագույն շրջանի հայ գրականության մեջ, ցեղասպանության առաջացրած հոգեբանական բարդությունների հաղթահարումը:

Ցեղասպանությունը վաղեմություն չունեցող ոճրագործություն է. այն ոչ միայն պետք է դատապարտվի, այլև պետք է վերականգնվի պատմական արդարությունը:

## Ոգեղեն և իրական հայրենիքի որոնումների խաչմերուկներում

20-րդ դարի 50-60-ականներին լույս տեսած մի շարք ստեղծագործություններ, մանավանդ Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն», «Եռաձայն պատարագ» պոեմները, Խ. Դաշտենցի «Խողեղան» և «Ռանչպարների կանչը» վեպերը արթնացնող հզոր ազդակ դարձան հարկադիր թմբիրի մեջ գտնվող ժողովրդի համար: Ոգեղեն և իրական հայրենիքի որոնումները ստիպում էին խորքային վերլուծություններ կատարել, հասնել ժողովրդի կենսափիլիսոփայության ակունքներին: 60-70-ականներին ասպարեզ եկավ գրողների նոր սերունդ, որ թարմություն ու ազգային դիմագիծ բերեց գրականությանը: Նրանցից շատերը գրական գործունեությունը շարունակեցին նաև անկախության տարիներին:

Այս շրջանի հայտնի գործիչներից է արձակագիր, հրապարակախոս, «Գարուն» ամսագրի հիմնադիր Վարդգես Պետրոսյանը: Հատկապես «Հայկական էսքիզներ»-ում նա ի մի է բերել հայոց պատմության ու հոգեբանության տարբեր խնդիրների, նաև ցեղասպանության ու նրա հետևանքների մասին խորհրդածությունները: «Քրքրում եմ քո գոյության հրաշքը,- գրում է հեղինակը,-որ հակառակ եղավ ամեն տրամաբանության. ինչպե՞ս ապրեցիր: Ես ամեն օր ետ եմ գնում քո պատմության քառուղիներով, իսկ դա ավտոմեքենայի ճանապարհ չէ՝ Երևանից Գառնի: Դա ճանապարհորդություն է ինքդ քո մեջ » /Վարդգես Պետրոսյան, Ընտիր երկեր, հ. 1, էջ 439/: Այդ որոնումները պիտի հատվեին Մեծ եղեռնի ճանապարհներին: Մի դեպքում դա հայրական տան շենքին անգուսպ հույզերն են ֆրանսահայ վանեցու, ով արցունքները թաքցնելու համար, չնայած ցրտին, լողանում է Վանա լճում, մեկ այլ դեպքում՝ Բեյրութի «Ստաֆ-հաուզ» հյուրանոցում Պասկալյան տոհմի՝ մահվանը սպասող վերջին շառավիղը, ով դառնությամբ մրմնջում է. «Հյուրանոցում անցավ կյանքս, որովհետև օտար երկիրը միշտ էլ հյուրանոց է՝ լավ կամ վատ, ի՞նչ նշանակություն ունի: Իսկ ապրելու համար տուն է հարկավոր, ես ուշ հասկացա» /ն.տ.էջ 329/: Այսպիսի փոքրիկ դրվագների միահյուսումով

ուրվագծվում է ողբերգական և ցավոտ մի իրականություն, որից առաջացած չսպիացող վերքը չի բուժում անգամ ամենագոր ժամանակը: Իսկ ամենաահավորը թրքացած հայի խոստովանությունն էր. «Իսկ մենք հավատացած էինք, որ մեզնից բացի աշխարհում ոչ մի հայ չէր մնացել»: Ո՞վ կհավատա այս պատմությանը, որ եղել է, գոյությանը այս Հյուսենիկ գյուղի, որ կա: Ո՞վ կհավատա...» /ն.տ., էջ 324/: Բեյրութի Սահակյան վարժարանի բեմի կենտրոնում հասարակ տուֆ քարը Հայաստան հայրենիքի խորհրդանիշն է դառնում և դրանով իսկ՝ սրբություն: Հանդիսավոր երեկոյթների ժամանակ նա, ով պիտի խոսք ասի Հայրենիքի մասին, կանգնում է այդ քարի վրա և ողբի տակ Հայաստանն է կարծում: Թերևս հեղինակի նման մենք էլ պիտի ասենք. «Երևի մեզ Անթեյը կհասկանար՝ հին հունական դիցաբանության հերոսը, որ ուժ էր ստանում, երբ ոտներով դիպչում էր մայր հողին: Երևի...» (ն.տ., էջ 334):

Քաղաքացիական ակտիվ կեցվածքով, դասական արձակից տարբերվող նոր՝ փորձարարական արձակով, իր ժամանակի համար արդիական բարդագույն խնդիրների քննարկմամբ առանձնացավ Պերճ Չեյթունցյանը: «Կլոդ Ռոբերտ Իզերլի», «Ամենատխուրը մարդը» վիպակների կողքին՝ մեկը մյուսի հետևից ծնունդ են առնում «Մեծ լռություն», «Ոտքի՛, դատարանն է գալիս» դրամաները, «Վերջին արևագալը» վեպը, որոնցում փաստագրական ճշմարիտ հենքի վրա ընթերցողի առջև բացվում է սահմոկեցուցիչ իրականությունը՝ քսաներորդ դարասկզբի հայոց արյունալի պատմությունը, որի իմացության պակասը ուներ նախ և առաջ Խորհրդային Հայաստանի հայ ընթերցողը: «Ոտքի՛, դատարանն է գալիս» պիեսի թեման հնարավորություն է տալիս տարբեր վկաների պատմածների միջոցով ցույց տալ կատարված ոճրագործության ողջ ահավորությունը: Եվ ի՞նչը կարող է վերականգնել արդարությունը, կամ գոյություն ունի այն ընդհանրապես. «Արդարություն՞ն ասացիր... Ի՞նչ արդարություն... Տեսնու՞մ եք, հարգելի՛ պարոնայք, տեսնու՞մ եք, հարգելի՛ տիկնայք, ոճիրը կատարվեց, ոճրագործը պատժվեց վրիժառուն արդարացվեց, էլ ի՞նչ եք ուզում... Ուրեմն՝ մոռանանք «...» Ես հաղթած կլինեի միայն այն դեպքում, եթե ինձ



կախադան հանեին... և այդ նոր անարդարությունը չէր թողնի, որ ժանգոտի մարդու հիշողությունը... (Պ. Ջեյթունցյան, Ընտիր երկեր, հ. 2-րդ, Երևան, 1987, էջ 130): Գրողն իր առջև դրել էր բազմաշերտ և խորքային խնդիրներ. ահավոր իրականությունը փաստագրական ճշգրտությամբ ցուցադրելուց բացի հեղինակը տենդագին փորձում է գտնել պատճառը. գուցե մենք էլ ունեինք մեղքի մեր բաժինը: Ադանայի կոտորածների մասին այսպես է գրում, «Հայերը, որքան էլ անակնկալի եկած լինեին, այնուամենայնիվ, շատ տեղերում դիմել էին ինքնապաշտպանության: Կառավարությունը պահանջել էր հանձնել զենքերը, և նրանք, *տեղի տալով օտարների խորհուրդներին, ինչպես նաև պատրիարքարանի հեռագրի հրահանգներին*, ենթարկվել էին ու զենքերը հանձնել: Ի պատասխան այդ դյուրահավատության՝ այս անգամ հենց կառավարական գործն էր կրկնակի սաստկությամբ շարունակել ջարդը և Ադանայում հայերի տների ութսուն տոկոսը ավերել» (Պերճ Ջեյթունցյան, Վերջին անագալը, Երևան, 1989, էջ 357): Այսքանից հետո մտածել, որ ընդամենը մեկ միջոց կա, անհեթեթ ու ծիծաղելի, բայց միայն մեկ միջոց՝ թուրքի դեմ բողոքելով թուրքին. սա ուղղակի աններելի է: «2 հունիս, 1915թ.» թվագրված նամակում արդեն աքսորյալ Չոհրապը գրում է կնոջը. «Հավատս չի գար, որ իմ թուրք գործընկերներս ամեն երախտիք մոռցած և օգնության չհասնին: Ուստի հույսս իրենց վրա է և մեյ մըն ալ՝ անմեղությանս վրա: Բայց այս միջոցին անմեղությունը ստակ մը չարժեր» (ն. տ., էջ 583): Չտեսնել պետական մակարդակով իրականացվող ցեղասպան գործողությունները, դարձյալ հավատալ թուրքի «առաքինությանը» և չդիմել ինքնապաշտպանության. ուներ արդյոք հայ մտավորականը այդքան միամիտ լինելու իրավունք: Առավել ևս, ինչպես բացատրել այն, որ Չոհրապը հրաժարվում է փախչելու հնարավորությունից, որ ընձեռել էին Մկրտիչ Յոթնեղբայրյանն ու նրա ընկերները. ակնհայտ է, որ հեղինակը համաձայն չէ մեծ գրողի ու հրապարակախոսի հետ, թե՛ «Ես չեմ կրնար փախչիլ, երբ հարյուր հազարներ անապատ կքշվին ու կմորթվին... Ես ալ պիտի ըլլամ անոնցմե մեկը, ե՛ս ալ... Չսե՛ս, չըսե՛ս, թե ինչ օգուտ անոնց հետ մեռնելեն... Ճիշտ բաներ չըսես,

կապանեմ...» (ն.տ., էջ 640): Միավորվելով պայքարելը և կռվում գտնվելը գերադասելի է. սա հեղինակի ուղերձն է, որ այնքան արդիական էր մանավանդ 80-ականների վերջին, առավել ևս այսօր՝ 21-րդ դարասկզբին: «Ի՞նչ իմանային, որ մեկ ամիս չանցած պիտի սկսվեր Ուրֆայի դյուցազնամարտը: Եվ որտեղի՞ց իմանային, թե ինչ հերոսություններ էր գործելու կապուտաչյա Մկրտիչ Յոթնեղբայրյանը: Իսկ մի երեկո, ծննդյան օրվա ճիշտ նախօրյակին, չորս կողմից թշնամիներով շրջապատված ու թակարդն ընկած, վերջին գնդակն արձակելու էր քունքին ու զարմանքով ընկնելու էր՝ «Համեցե՛ք, ծանոթանանք» խոսքերը շրթներին...» (ն.տ., էջ 642):

Բոլոր դեպքերում պայքարը գերադասելի է. սա է գրողի կողմնորոշումը:

## Կորցրած հեքիաթի որոնումների ճանապարհին

Ցեղասպանության մասին պաշտոնական վիճակագրությունը հաղորդում մարդկային, տարածքային, թերևս նաև նյութական, մշակութային կորուստների մասին, բայց դա երևույթի արտաքին՝ տեսանելի կողմն է. ցեղասպանությունը վերապրած մարդու հոգում այն շարունակվում է ամեն օր՝ մինչև գերեզման հնարավորություն չտալով մոռանալ այդ արհավիրքը: Ցեղասպանությունը վերապրածներից քանի՛-քանի՛սը ձուլվեցին օտարներին՝ կորցնելով ինքնությունը, քանի՛-քանի՛սը նահանջեցին ֆիզիկապես... Դերևս սփյուռքահայ գրականության ձևավորման արշալուսին այդ խնդրին անդրադառնում է Շահան Շահնուրը. «Տղա մը պակաս է եղել... որու՞ն հոգն է... հաշիվ բռնողն ո՞վ է... ո՞վ պիտի գա հոս մարդ փնտրե... Այսչափ մարդ գարկին, այսչափ անմեղի արյուն մտան... Ո՞վ որի...» (Շահան Շահնուր, Երկեր, Հայպետհրատ, էջ. 93): Ցավագին գիտակցությունը այն իրականության, ուր նահանջը անխուսափելի է, հասցնում է գրերե հուսահատության. «...Իսկ մենք կվճարենք իբրև վերջին փրկագին այն, որ պիտի գա: Իբրև վերջին փրկագին՝ մանուկներ, որոնք կրնային մեծնալ, ապագայի սերունդներ, որոնք մեզմե վերջ պիտի գային: Որովհետև այն, որ պիտի գա, պիտի ըլլա օտար՝ բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ, մեղա՛, մեղա՛ Արարատին» (ն. ա., էջ 254): Մայր հայրենիքում, թվում է, չկար ձուլման կամ ազգային ինքնության պահպանման խնդիր, սակայն համահարթեցնող մամլակը ազգային մտածողության ամենափոքր նշույլն իսկ դատապարտում էր՝ համարելով դավաճանություն: Անհիմն գրպարտությունները, որոնց զոհ գնացին ազգային մտածողություն ունեցող մտավորականներից շատերը, առաջ էին մղում համահարթեցված, «գազոնային» գրականությունը՝ իբրև ցանկալի չափանիշ: Զարմանալի չէ, որ Հազրոյի կամ Լառ Մարգարի կարոտը կորցրած բնօրրանի նկատմամբ Բակունցի ձերբակալության ու գնդակահարության պատճան դարձավ: Իրականությունը դրականորեն փոխվեց 50-ականների վերջին, 60-ականներին: «Ազգային սնապարծաթյուն և ազգային արժանապատվություն» հոդվածում Պ.Սևակը գրում է. «Ավելորդ զգուշավորությունը,

ցեղական մտավախությունը, անհիմն կասկածամտությունը կարող են հասցնել երիկամունքի հոգևոր բորբոքման, մի հիվանդության, որ դեպի մահ է տանում: Եթե մենք բոլորս կարողանանք գիտակցել այս, ապա մեր գրականությունը կսկսի աճել հեքիաթի մանկան պես ոչ տարով, այլ օրով» (Պ. Սևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 5, էջ 304): Մտավորականները սկսեցին բարձրաձայն խոսել դարասկզբին հայ ժողովրդին պատուհասած ոճրագործության մասին: Պ. Սևակի «Անլռելի զանգակատաուն» պոեմը, Խ. Դաշտեցի «Խողեղան» վեպը հայ ընթերցողի առջև բացում էին սահմոկեցուցիչ իրականությունը, իսկ «Ռանչպարների կանչը» բացահայտում էր այդ ծանր տարիների հերոսական պայքարի դրվագները, որ շատ կարևոր էին խեղճ ու անօգնական զոհ լինելու բարդությից ազատվելու համար: Մուշեղ Գալշոյանի հերոսները արտաքուստ նոր կյանք սկսած, բայց մինչև կյանքի վերջը կորցրած հայրենիքը մոռանալ չկարողացող, հայրենի հուշերով և բարոյական օրենքներով ապրող մարդիկ են, մարդիկ, որոնք տարիներ անց էլ ապրում են իրենց կորցրած հայրենիքում, իրենց կորցրած երազանքներով: Այս բոլորը կարելի է ամփոփել հայրենիք, հող, երիտասարդություն ու երազանքներ կորցրած և օր ծերության իր պատանեկան երազային սերը՝ «Էն խորոտ հեքիաթը»՝ արդեն պատաված Ալեին գտած Զորոյի խոսքում. «Արևմարք չեղներ մեջ աշխարքին, կեսօր ու արևմարք ու իրիկուն ու գիշեր չեղներ, ամառ ու ձմեռ չեղներ... Կպիտեր՝ թաք գարուն... Թաք գարուն ու առավոտ... Ու մեծն, էրեխան մնար էրեխա, ես՝ էն նախշուն քարի վրա, դու՝ շաղոտ կանաչների մեջ, ու քու գլխին ծաղկեպսակ, ու քու գլխին ծաղկեպսակ, Ալե...» (Մուշեղ Գալշոյան, Մարութա սարի ամպերը, Երևան 1981, էջ 22): Իսկ Մամփրե պապը, որի կռիվը կիսատ էր մնացել, գտել էր իր կռիվը ավարտելու միջոցը. «Մամփրեն արքա է, իսկ սուրբ Մաշոյի գրերը զինվորներ են» (ն. տ., էջ 289):

Գալշոյանական այս գծի արժանավոր շարունակողը եղավ բանահավաք, երգահան, արձակագիր, նաև հայերենի ուսուցիչ Գևորգ Հակոբյունը: Ծնված լինելով Մուշ-Մասուն աշխարհից բռնագաղթած և Վերին Սասնաշենում ապաստան գտած գաղթականների ընտանիքում՝ ապագա գրողն ու բանահավաքը մեծանում էր

հայրենիք կորցրած մարդկանց առասպելախառն պատմություններին, սասնածին պապերի անամոք կարոտին, «երված սրտի փափագներին» ունկնդիր, իսկ հասունության շրջանում նրա կյանքի իմաստն է դառնում կորուսյալ հայրենիքի պատկերի, այն չմոռանալու պատգամ-կտակի փոխանցումը գալիք սերունդներին: Իր այս առաքելությունը Գևորգ Հակոբյանը հրաշալի է իրականացնում բանահավաքչական բեղուն աշխատանքով, «Ծովասար» մանկական երգչախմբի ստեղծումով և, իհարկե, գեղարվեստական գրականությամբ: Բազմազան է Գ. Հակոբյանի ստեղծագործությունը՝ բանաստեղծություններ, պատմվածքներ ու նորավեպեր, վեպ կամ վիպասք. դրանցում ամենաբնորոշը ժողովրդաբանահյուսական մտածողությունն է, էպոսային աշխարհընկալումը: Իր պապերի ու հայրերի բնօրրանում երբևէ չեղած բանաստեղծը մինչև հոգու խորքը լցված էր կորցրած հայրենիքի կարոտով.

Ոսկեջուր կտուցով մի թռչնակ լուսեղեն,  
Հայացքը՝ երկնքին, հեքիաթներ է հյուսում,  
Հեքիաթով իր լուսե., հույզերով իր արթուն  
Երկնքում կորցրած օրորոցն է փնտրում:  
(Հակոբյան Գ., Քելե՛, լաո՛, Ջանգակ 2012, էջ 14)

Գ. Հակոբյանի ստեղծագործության թագն ու պսակն է «Քելե՛, լաո՛» երգը, որը, ինչպես Ի. Մամյանն ընդգծում, հայրենիք կորցրած մարդու տառապանքը, խլված հեռավոր երկրի ահավոր ողբերգությունը արտահայտող՝ մինչև օրս չգերազանցված ստեղծագործություն է, կարոտի ցավի չբուժվող մի վերք: Թվում է, թե «Քելե՛, լաո՛» երգը ամփոփումն ու հանրագումարն է Գ. Հակոբյանի ստեղծած կերպարների բազմազան ու ինքնատիպ, բայց ինչ-որ տեղ նաև իրար նմանվող ու ընդհանրացող երանգապնակի: Տարիներ են անցել այն չարաբաստիկ օրերից, սակայն օրհասից փրկվածների համար ժամանակը կարծես կանգ է առել, և նրանք ապրում են ավելի շատ անցյալով և անցյալում՝ հաճախ չներելով իրենց սխալի կամ չարածի համար:

Այդպես, Միմե Ավեսը չի կարող մոռանալ իր պատանության օրերին հարսանիքը Ոսկե Ճկույթ եկեղեցու բակում, հրեշտականման Օղիտային, որին, չկարողանալով փախցնել, դաշույնով մահացու վիրավորում է Մեհմեդ Էֆենդին: Փրկելու միակ հույսը արթոխիկ ծաղիկն էր, որը կիրականացներ երեք ցանկություն, եթե գտներ Համբարձման գիշերը: Գտավ, բայց հենց վերջին գիշերը վրա հասավ Մեհմեդը, տրորեց, տրորեց արթոխիկը պաշտպանող Ավեսարի ձեռքերը. արթոխիկը ճիւղել էր, թուփ-թուփ մահացել էր՝ արյան ու հողին խառնած: Տարիների հեռվից Ավեսար պապը բացահայտել է ճշմարտությունը. «Մի թող քու արմատ բացեն ու ճանաչեն քեզ: Որ բացեցին, շուտ տալը դժվար չէ» (ն. տ. էջ 196): Արթոխիկը վեջապես գտնելու տենդագին ցանկությունը Ավեսար պապին ցնորային տեսիլքների մեջ է գցում. թվում է՝ ձորը լցվել է ասկյարներով, Մեհմեդ Էֆենդին փախցնում է արթոխիկ ծաղիկը, Ավեսարը կրակում է նրանց վրա... Իսկ ավարտը, թվում է, ճակատագրի հեգնանքն է. կիսամեռ ու խելագար, Միմե Ավեսին աքսորում են՝ անձնական գործում գրելով. «Հակա: Հարևան թուրք աշխատավոր ժողովրդին պատերազմ է հայտարարել» (ն. տ. էջ 202): Միմե Ավեսը դաձավ հակա, իսկ Մեհմեդ Էֆենդին՝ աշխատավոր թուրք հարևան:

Այդպես նաև Արիսա Աղջոն՝ համանուն պատմվածքի հերոսը, չի ներում իրեն այն բանի համար, որ չէր առել իր վրեժը Միրզաբեկից, ով դավադրաբար սպանել էր իր եղբորը, իսկ Ընձուղցի Կալեն ոչ մի կերպ չէր կարողանում ներել հարազատ հորը. «Իմ հեր որ խելք ունենար, ինքն էլ կմտներ մեջ ցորենի արտին, կպահվեր ու ողջ ու առողջ էր: Չմտավ մեջ ցորենի արտին: Իմ մոր ձեռքից բռնեց ամուր ու կանգնեց դիմաց ասկյարների ու կորդո Սլոյի, ես իմ պահված տեղից տեսա, թե ինչպես մորթեցին զիմ հեր ու մեր» (ն. տ., էջ 224): Միայն հարազատ որդու՝ Հակոբի մահվան անչափելի ցավը ստիպում է հասկանալ հոր արարքը: Նրա ողբը անհնար է առանց հուզմունքի կարդալ. «Ծանր է զավակի վիշտ, ու ոչ մի ծնող չի դիմանա» (ն. տ. էջ 235):

Հուզիչ է Միսակ պապի պատմությունը: Ապրում էր մեն-մենակ իր փոքրիկ տնակում, կտրականապես մերժել էր ծերանոց գնալու առաջարկը. «Վազ կեցեք իսնե, ջանձրմ, ես առանց մեր սարերու չեմ կրոնա ապրի» (ն. տ. էջ 307): Միսակ պապը չէր կարող ապրել առանց իր սարերի և չէր կարող դավաճանել իր ընտանիքի ու կնոջ՝ Ալմաստի հիշատակին: Նրա կյանքի պատմությունը, մանավանդ կնոջ կերպարը ապշեցնում են իրենց վեհությամբ ու անձնագոհությամբ: Սուլթանը ընդդիմանալու համար այրել է տվել Միսակի հարևան Մուրադի տունը, փրկվել էր միայն նրանց վեց ամսական որդին, որին երդիկից բարուրած դուրս է նետել մայրը: Ալմաստը գտել էր երեխային, պահել իր որդու հետ, իսկ երբ թուրք զինվորները պահանջել են իրենց տալ Մուրադի տղային, Ալմաստը տվել է իր գավակին. «Միսակ, քու ծառան էդնիմ, չնեղենաս, մեղկունք էր Մուրադը, ինչու՞ զուր տղեն իդենք, ինչու՞, չե՞ որ Սասնո օջախ մե կմարեր» (ն. տ. էջ 310): Իսկ կոտորածի ժամանակ ջարդերից մազապուրծ փրկված երեխաներին փրկելու համար Ալմաստը, նամակը բերանում պահելով, իրեն կապում է ծառի ճյուղին և նետվում գետը: Միսակի մեջ ու Միսակի հետ ապրում է սև անցյալի ծանր բեռը, բայց կարևոր է, որ այն չի կարողացել մարել նրա մեջ եղած լույսն ու բարությունը. մտածիմ էր բոլորի մասին, անգամ գարնան հավքերի և հոգ էր տանում, որ նրանք էլ անտուն չմնան. «Հե՛յ գիտի, մտածում էինք նրա իսկ խոսքերով, ի՛նչ հոգի ունի մեր Սասնա պապը, չի ուզում, որ գարնան մի հավքն անգամ անբուն «անօջախ» մնա...» (ն. տ. էջ 312): Միսակ պապի անձնագոհ, համարձակ և աննկուն կամքի տեր, ազգափրկությունը ապրելու նպատակ դարձրած կնոջ կերպարը հմայել է հեղինակին և ավելի ծավալուն և ամբողջական արտահայտություն գտել «Ճերմակ հարս, որ շողում է հորիզոնի կապույտ մշուշում» վեպի գլխավոր հերոսուհու՝ վարժուհի Աքինայի կերպարում: Ամենակարևորը այս կերպարում ոչ թե մահը կյանքից գերադասելն է, ինչպես անում են գերված կանանցից շատերը, որոնք ինքնակամ մահ են ընտրում՝ ասկյարների ձեռքը չընկնելու համար, այլ ամենայն նվաստացում տանելով՝ ինքագոհությամբ փրկել ազգի թեկուզ մի բեկորը: Ազգի փրկությունը ինքնագոհության միտքն է նրան ուժ տալիս՝ ստանձնելու Միրզաբեկի հարձի

քստմենլի դերը, որպեսզի գոնե գաղտնի քարանձավում ապաստանած քառասունհինգ երեխաները փրկվեն. «Ո՛չ մի հայ չպետք է ողջ մնա, սա է Բարձրագույն դռան հրամանը: Հրամանը կատարողները անթիվ-անհամար են: Դուք պետք է ապրեք: Ազգը պետք է մնա: Եթե յուրաքանչյուր գյուղից թեկուզ տասը-տասնհինգ մարդ ազատվի, մեր թշնամիների նպատակը չի կատարվի» (ն. տ., էջ 346): Միայն ֆիզիկական փրկությունը առանց հոգևոր ուժի արժեք չունի. սա լավ է հասկանում չքնաղ Աքինան և հանձնարարում երեխաներին շարունակել սովորել այբուբենը, սերտել «Սասունցի Դավիթը»: Նույնիսկ հարազատ որդուն՝ Եզնիկին փրկելու հույսը չի ստիպում Աքինային հայտնելու քարանձավի տեղը: Հեղինակը համոզված է, որ հային առաջնորդողը երկու գաղափարներ պիտի լինեն՝ ազգապահպանություն և վրեժխնդրություն; «Եթե ես պատմեի ճշմարտությունը, Եզնիկը կապրեր,- ասում է Աքինան երեխաներին:- Նրա համար չեմ ասում, որ իմ ինքնագոհության չափը հայտնի դառնա, ոչ էլ նրա համար, որ վրիժառության կրակով վառվեք: Ասում եմ նրա համար, որ զգաք, թե ինչքան թանկ էր ձեր փրկությունն ինձ համար,- Աքինան լուռ լացեց,- բայց պետք է կարողանաք մնալ հոգով արի և գեղեցիկ: Ձեր պայծառ հոգին չպետք է աղավաղվի» (ն. տ. էջ 402): Աքինայի ջանքերն իզուր չանցան. քառասուն-քառասունհինգ երեխա փրկվեց, ուրեմն այդքան ուստ կծլարձակի, իսկ ինքը՝ այդ հերոս կինը, հարմար առիթը օգտագործելով, սպանում է և՛ Միրզաբեկին, և՛ Ավտալ բեկին, թեկուզ և դա անում է իր կյանքի գնով:

Գ. Հակոբյանի գրական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Ծովասարի կակաչները» վեպը: Վեպի կենտրոնում որք Արորիկի կերպարն է, որ ստիպված էր հասունանալ ժամանակից շուտ՝ մի գիշերվա մեջ, ինչպես Գ. Մահարին է գրում իր «Մանկություն» վիպակում. «Ես պատանի դարձա մի գիշերվա մեջ. քնեցի մի օր մանուկ և զարթնեցի պատանի, որպես մահիկ ննջեցի և արթնացա լիալուսին» (Գուրգեն Մահարի, Երկերի ժողովածու հինգ հատորով, հ. 2, Երևան 1967, էջ 51): Հոր՝ Օվնիկի՝ կերպարը, որ միշտ ապրում էր Արորիկի մեջ, նրա համար և՛ օրինակ էր, և՛ ոգեշնչման աղբյուրը: Մեծ եղենից մազապուրծ՝ հասել էր Բաթում, աշխատել



նավահանգստում, փող ետ գցել, ամուսնացել Ալմաստի հետ, եկել հաստատվել Արագած սարի փեշերին՝ էրզրի ծանոթ-ընկերների մոտ, օրնիբուն աշխատանքով մեծ տնտեսություն ստեղծել, տղա է ունեցել և կնքել էրզրի գյուղի անունով՝ Արորիկ: Գյուղը սիրել է նրան, ինքն էլ օգնել է գյուղին: Բայց ահա մի օր կեսգիշերին կոմերիտական տղաներից մեկը եկել ու ասել է, որ որոշել են նրան կուլակաթափ անել, և խորհուրդ է տվել ամեն ինչ վերածել ոսկու: Բայց հայրը պատասխանել է. «Որպեսզի ընդհանուրին չտա՞մ: Ինչ որ պետք է, էն է լինելու: Իմ ուզածն է: Էնքան ցավ ու կորստից հետո ողջ ենք մնացել, ապրում ու հաց ենք ուտում, իմա՞լ էդքան անասուն շարքից հանեմ, ու ժողովուրդ մնա չոր առվի հույսին: Չեմ ծախի» (Հակոբյան Գ., Քելե՛, լա՛ն, Զանգակ 2012, էջ 440): Ավա՛ղ, ազնվությունն ու արդարությունը չէ, որ առաջնորդում են մարդկանց. ճոխ թաթոսի զրպարտության հիման վրա արտորում են Օվնիկին ծիծաղելի մեղադրանքով. «Անասունները հանձնել ես կոլտնտեսություն, բայց սիրտդ չի կտրվում նրանցից, գրկում ես, համբուրում ես, լաց ես լինում: Շա՞տ ես ավստում» (ն. տ., էջ 440): Մայրը անկողին է ընկնում, իսկ վերջնական հարվածը լինում է այն, որ գարնանը տնամերձները վարելիս թույլ չեն տալիս վարել նրանց հողամասը: Մանկական պարզ ու միամիտ հայացքի ներքո ավելի պարզորոշ տեսանելի է դառնում մարդկային էության փոփոխությունը. մարդը վախենում է ասել մտածածը, վախենում է լինել ազնիվ ու կարեկից: Այս պայմաններում մարդկային էությունը պահպանելը դառնում էր համարյա հերոսություն: Երբ գերագանց արտասանած բանաստեղծության համար ուսուցիչը նախ գտնում է Արորիկին, բայց նայելով Թաթոսին՝ ավելացնում. «Ափսո՛ս, երգեցիկ արտասանեցիր», - և գեահատում «միջակ», տարակուսած Արորիկը խորհում է. «Մի՞ թե ուսուցիչն ու մարդը նույնը չեն: Ուսուցիչը համարձակ էր, ասաց՝ ապրես: Մարդը վախկոտ էր, ասաց՝ երգեցիկ է: Գուցե մա՞րդն էր համարձակ, իսկ ուսուցիչը՝ վախկոտ: Ինչու՞ է այդպես» (ն. տ., էջ 435): Հեղինակը համոզված է, որ կա նաև մարդու մի այլ տեսակ, որի շնորհիվ էլ մարդը դեռ մնում է Մարդ: Այդպիսին է Շողիկ մամը, որ անկախ ամեն ինչից շարունակում է խնամել որբացած Արորիկին՝ «սոցիալապես անհարազատի» որդուն,

այդպիսին է նրա որդի Հայկազը, որը մորն ասում է. «Ես թող Սիբիր քշվեմ, բայց դու պիտի Արորիկի մոտ մնաս» (ն. տ., էջ 447), այդպիսին էին Սիմե Ավեսը, Վառո տատը և էլի ուրիշներ:

Արորիկի մեջ մի անբացատրելի մղում կար դեպի իր ծնողների կորցրած չքնաղ հայրենիքը. արյան կա՞նչ էր դա, ոգու հավերժական տե՞նչ, որ այդպես ձգում էր Արորիկին ու մյուս երեխաներին դեպի բակ-հավաքատեղին, ուր գյուղի նահապետերը՝ սասնեցի պապերը, հավաքվում ու երկար զրուցում էին Արաբոյի ու Էրզրի մասին: Հորթարած դարձած Արորիկը իր տարիքին անհամապատասխան խորաթափանցությամբ հասկանում է, որ սասնեցի պապերի պատմածները պետք է պահպանել, փոխանցել եկող սերունդներին, որովհետև ամեն մի պապի հանգչելու հետ հանգչում ու հեռանում է մի ամբողջ գյուղի, բնակավայրի մասին հիշողությունը: Այսպես նրա շուրջ կարծես միավորվում են սասնեցի պապերը՝ իրենց չսպիացող հիշողություններով: Հորթարած դարձած Արորիկի համար ամենաերանելի պահերը պապերի հետ անցկացված երեկոներն էին, որոնց ընթացքում էլ մեկը մյուսի հետևից գրվում են Շենիկցի Խուզեի, Տատրագունցի Մանեի, Տավորիկցի Ասոյի, Հոսենցի Դավեի, Թաղվանքցի Մգրոյի, Բերդանքցի Մանուկի, մյուս պապերի պատմությունները՝ անհունորեն տխուր ու ողբերգական, բայց հաճախ նաև անհավատալի հերոսական: Թվում է՝ մարդ անգոր է դիմանալու այսպիսի փորձությունների, մարդը ինքն էլ գազան կդառնա, բայց հայ մարդը այս ամենի հետ կարողացել է պահել իր մարդկային էությունը: «Մեր ժողովուրդ թույն չունի,- ասում է Մանե պապը,- էդ անփողպատ շապիկ մեզ մի՛ հազցրեք: Էս անուշ ժողովրդին պղտոր ջրեր մի՛ խմցրեք: Վրեժն ուրիշ բան է: Թույն ու վրեժ միայն օձի մոտ է իրար կգումարվի: Ժողովուրդ, որ վրեժի հետ թույն էլ ունեցավ, էն ժողովուրդ չէ, էն օձ է...» (ն. տ., էջ 605): Ապրելու համար մարդ պետք է նպատակ ունենա՝ բարի ու վեհ նպատակ, որի համար արված ոչ մի զոհողություն շատ չի թվա: «Մարդ ամուր պիտի ոտ դնի հողին, ամուր նստի, ամուր պառկի հողին: Ամուր՝ կնշանակե քաջ ու շիտակ: Քաջ՝ կնշանակե նպատակի հետևից երբ կվազես, զոհվելու մասին մի՛ մտածե:

Զոհաբերություն մարդ պիտի անի. մեկը կգոհվի, մյուսներ գնահատեն կորուստը և խորոտ ապրեն» (ն. տ., էջ 484): «Խորոտ ապրելու» քննությունը գերազանց է հանձնում նաև Արորիկը, երբ հեղեղի ժամանակ, իր կյանքը վտանգելով, փրկում է իրեն այդքան դժբախտություն ու ցավ պատճառած ճոխ Թաթոսի որդուն:

Խորհրդանշական է Մանուկ պապի պատմածը Հովհաննես վարժապետի մասին, որն հանդգնել էր ասել, թե Սասնա Դավիթը լեզենդ է: «Ուրեմն սու՞տ են էս բերդ ու էն բերդ, ուրեմն սու՞տ է Խանդուլի քար՝ ջուխտակ աղբյուրներով, սու՞տ է Դավթի ընկույզի անտառ... Իմ ու էստեղ հավաքված ողջ գյուղի կենսագրություն սու՞տ է: Մենք իզու՞ր ենք ապրում, իզու՞ր ենք զավակներ սերում ու էնոնց անուններով կանչում... հ՛եյ, վարժապե՛տ, դու ինչու՞ պղտորեցիր էն աղբյուր, որից հազար ու հազար տարի մեր մանչեր կխամեին» (ն. տ., էջ 544):

Ուշադիր լսելով պատմությունը՝ Սուրիկը մի պահ երկմտում է. գուցե ճիշտը Հովհաննես վարժապետն է, թերևս նենգ թշնամու նկատմամբ պետք է նենգ ու աններող լինել, պետք չէ Դավթի նման զգուշացնել դավադրաբար հարձակված թշնամուն: Արորիկի՝ սասնեցի պապերի ավանդը իր մեջ կրող պատանու պատասխանի մեջ հեղինակը հաստատում է հայ ժողովրդի հարատևության գաղտնիքը. «Մանե պապն ասում է, որ պատերազմող կողմերից եթե մեկը ոգու վեհանձնություն չունենա, ապա աշխարհը կրկին կլցվի մարդ-գազաններով, մարդկության հազարավոր տարիների տառապանքով ընտելացրված շունը կրկին գայլ կդառնա ու տիրոջը կհոշոտի: Մարդը պատերազմում անգամ պետք է գեղեցիկ լինի: Պետք է խորոտ հոգի ունենա: Սա հայ ժողովրդի հոգեբանությունն է» (ն. տ., էջ 545): Լեզե՞նդ է, թե՞ իրականություն. պատմում են, որ Հակոբ պապը Մշո դաշտում հարյուր ոսկի է տվել թուրք Մուստաֆա Բադիրխան էֆենդուն և ետ է գնել «Մշո ճառոցի» թալանված մեկ էջը: Մշու դաշտում այդ նույն բանը պատմել են Հակոբ պապի հոր մասին: Ուրեմն կարևորը լեզենդն է, որ հյուսվել է պետականությունից

գուրկ հայ ազգին նեցուկ դառնալու համար, նրա հարատևությունը հաստատելու համար:

Կյանքը շարունակվում է, բայց ահա՝ նորից պատերազմ: «Զոհվել է նաև Հակոբ պապի միևնույն: Պատերազմը մեր լեզենդն էլ է սպանել: Արդեն բոլորս էլ գիտենք, որ Մանե պապի Սանանար որդին էլ է սպանվել: Այսինքն՝ սպանվել է մեր գյուղի բանաստեղծությունը, սպատվել է Դիանայի սերը» (ն. տ., էջ 613): Պատերազմը չարիք է, և այն սպանում է նաև մանկությունը. Այդ է պատճառը, որ պատանիները մեծանում են միանգամից՝ մեկ օրում, և եթե չկան ավագները. ուրեմն նրանք են դառնում հայրենիքի աննկուն պաշտպաններ. «Մեկընդմիջտ վճռեցի գնալ Հոբի քարափները և ձեռք բերել հրեղեն ձին ու հրեղեն սուրը,- գրել էր Արոթիկը նամակում: - ... Ինձ հավատացեք, ես կհաղթեմ, որովհետև ես ձե՛ր երազանքն եմ կատարում, և ինձ հետ ձեր միասնությունն է, ձեր ուժը, ձեր օրհնանքը» (ն. տ., էջ 631): Նա կարծես մի նոր Փոքր Մհեր է, որը, սակայն, ոչ թե փակվում է ժայռի մեջ, այլ նետվում է պայքարի՝ դառնալով ազգի հավաքական երազանքների կրողը և իրականացնողը: Թերևս սա Գևորգ Հակոբյանի եզրակացությունն է. ազգի հարատևության գաղտնիքը նրա միասնականության, ազգային ինքնությանը, ազգային երազանքներին հավատալու և հավատարիմ մնալու մեջ է. «...Արոթիկ բուռ մի արև էր, գնաց որ արևին խառնվի ու համայն հողագունդ ավելի տաք պահե ձմռան բքից» (ն. տ., էջ 632):

## Ցեղասպանությունից մինչև Արցախյան հերոսամարտ

Ցեղասպանությանը նվիրված ժամանակակից գրականության կարևոր առանձնահատկություններից է այն, որ ընդգծվում է պայքարի ոգին, անհնարին վիճակներում անգամ չհուսահատվելու և ելքեր փնտրելու, դժոխային պայմաններում մարդկային դեմքը պահպանել կարողանալու կարողությունը: Ստեփան Ալաջաջյանի՝ Ջեյթունի վերջին հերոսամարտը պատկերող «Եղեգները չխոնարհվեցին» գրքում հեղինակը գրում է. «Հենց որ զեյթունցին վայր չի դրել զենքը, ստեղծվել է մի պատմություն... Քանի~քանի~ դար վայր չդրվեց զեյթունցու զենքը, և քանի~քանի~ դար սրբազան հուշարձաններ կանգնեցրինք: Միայն մեկ անգամ, լոկ մեկ անգամ զենք չվերցրեց Ջեյթունը, 1915-ին... Անեծք, անիծյալ թվական... Եվ հերոսական դամբաններ չերևացին, մեր շիրիմները մնացին անհայտ» (Ստեփան Ալաջաջյան, Եղեգները չխոնարհվեցին Երևան 1967, էջ 7): Այս միտքը շարունակելով՝ մեկ այլ տեղում հեղինակը Փառենի բերանով ասում է. «Ձենքը բոլոր դիվանագիտությունների վերջակետն է» (ն. տ., էջ 20): Հայր իրավունք չունի մոռանալու այս ճշմարտությունը, որովհետև նրան բաժին է ընկել բոլոր հարևաններից վատագույնը: Կարևորագույն դասը, որ մեկընդմիջտ պիտի յուրացնի հայը, ամեն դեպքում հույսը սեփական ուժերի վրա դնելն է, նաև այն, որ ոչ ոք և ոչինչ չի կարող հաղթել իր տունը, հողը պաշտպանող մարդուն:

Հետաքրքիր հարցադրումներ են արվում արձակագիր, դրամատուրգ Վրեժ Իսրայելյանի «Հայ-թուրքական հինավուրց խաղ» պատմվածքում: Թերևս ոչ պատահականորեն անտեսանելի կամուրջ է ստեղծվում քսաներորդ դարասկզբի և դարավերջի միջև: Պատմվածքն այսպես է սկսվում. «Գրեթե հարյուր տարի առաջ մի թուրք ուզեցավ տարբերվել մյուս թուրքից՝ հայ գաղթական կնոջը օրորոցային երկվորյակների հետ քարանձավում հայտնաբերելով: Նա զսպեց իր այունակիցների մոլուցքը և փորձեց ստեղծագործական լիցք հաղորդել իր գործողություններին: Այդ «ստեղծագործության» արդյունքում այսօր ես կամ: Թուրքի այդ տեսակը գաղթական

կնոջը փոխշահավետ գործարք առաջարկեց. Եթե կինը խեղդի իր երեխաներից մեկին, ինքը խոստանում է պահպանել կնոջ և մյուս երեխայի կյանքը» (Կայարան. 20-րդ դարի երկրորդ կեսի հայ պատմվածքի ընտրանի, Երևան 2012, էջ 171): Ոչ թե մարդու, այլ նույնիսկ գազանի համար բացառիկ անգթություն, որը ոչ մի կերպ հնարավոր է տեղավորել մարդկային մտածողության սահմաններում: Հետո՝ Էջմիածնում՝ Մայր տաճարի դեմ հանդիման խելագարված տատ, որբանոցներում մեծացած հայր և Մեծ եղեռնից գրեթե հարյուր տարի անց՝ Արցախյան պատերազմի ականատես և վավերագրող հեղինակ:

Անցել է մի ամբողջ դար, և ոչ մի փոփոխություն ազգային դիմագծի մեջ: Թուրք գնդապետը գերված հայուհու փոխարեն առաջարկում է հինգ մենամարտ՝ հարմարյա կանխորոշված ելքով. ըստ էության, դա նշանակում էր հինգ զինվորի կյանք գերված հայուհու փոխարեն: Իրականում չի փոխվել ոչինչ, և սա հայ-թուրքական հինավուրց խաղի շարունակությունն է: «Մեհմեդ Ամիրօղլին նենգ գործարք է առաջարկել՝ հինգ մահ մեկ կյանքի դիմաց,- ասում է երկրապահ ջոկատի հրամանատարը:- Նա ուզում է մեկ անգամ էլ ճանաչել իր թշնամուն: Ուզում է իմանալ՝ հայը ընդունակ է հինգին զոհել մեկին փրկելու համար.... Պատերազմական օրենքներով եթե դատենք, ճիշտ որոշում կկայացնենք, բայց հայի մեր տեսակը չենք պահպանի: Եթե հայի մեր տեսակը պահպանենք: Մեհմեդ Ամիրօղլուն կօգնենք, որ նա էլ թուրքի իր տեսակը պահպանի և հայրենիք վերադառնա «իր կենսագրությունը հարստացրած»» (ն. տ., էջ 177): Նույնն է հիմնախնդիրը, և միակն է հարատևության բանալին՝ տեսակի, հայի ինքնության պահպանություն:

Բայց հայ ժողովրդի տարած փառավոր հաղթանակը կարևոր բան է փոխել հայի մտածողության մեջ. նա այլևս Ընծուղցի Կալեի խեղճ ,անգեն հայրը չէ, որ կնոջ ձեռքը բռնած կանգնում է կորդո Սլոյի սրի առջև՝ որդուն փրկելու հույսով, այլ թշնամու աչքերի մեջ անվախորեն նայող և թեկուզ իր մահվան գնով թշնամու մահն ավետող հայ զինվորն է, Հայոց բանակի հայ զինվորը. «Հայ-թուրքական հինավուրց

խաղի» Ձեր առաջարկը ընդունում ենք չնչին հավելումով՝ հինգերորդ կրակողը ես եմ լինելու, .... և կրակելու ենք երեք մետր հեռավորությունից: Այն բավարար է միմյանց աչքերի մեջ նայելու համար: Ատելության այն պաշարը, որ գոյացել է մեր միջև, կսպանի և՛ ինձ, և՛ քեզ. (ն. տ., էջ 178):

Գրականությունը չի կարող տալ բոլոր հարցերի պատասխանները, բայց այն պետք է օգնի ճանաչել կյանքը, մարդուն, իմաստավորել կյանքը ու նայել առաջ՝ հիշողությունը չկորցնելով, որովհետև առանց հիշողության մարդը մարդ չէ այլևս. սա է հեղինակի կարևոր ուղերձը:

## Եզրակացություն

Հայտնի ճշմարտություն է, որ մարդը կենդանական աշխարհից տարբերվում է նախ և առաջ հիշողությամբ: Ցեղասպանությունը հայ ժողովրդի պատմության ողբերգական ու սև էջն է, որը հնարավոր չէ և պետք չէ մոռանալ: Սակայն այն պետք է հիշել ոչ թե ողբալու ու ցավելու, այլ դասեր քաղելու, առաջ գնալու և ազգային նպատակներին ծառայեցնելու համար: Ազգային գրականության հիմքը ազգի պատմությունն է (ճշմարտություն, որ փաստում էր դեռևս Մ. Նալբանդյանը հայ նոր գրականության ձևավորման արշալույսին), և այն նույնքան ճշմարիտ հիշատակարան է, առաջ մղող հզոր ուժ, որքան պատմագրությունը: Անցյալի վրա հենվելով՝ այն հզոր խթան է դեպի ապագա տանող ճանապարհին: Նույնիսկ տեղեկատվական տեխնոլոգիաների հաղթարշավի այս դարաշրջանում գրականությունը պետք է մնա և լինի հայակերտման կարևորագույն միջոց և գործոն: Ներկայացված գործերում, մանավանդ «Ծովասարի կակաչներ»-ում անընդհատ ընդգծվում են հերոսական, բայց անհավասար պայքարի բազմաթիվ օրինակներ: Նպատակը, կարծում եմ, խղճուկ ու անդեմ զոհի կարգավիճակից դուրս գալն է, հայկյան ժառանգորդի ազգային դիմագծի վերականգնումը: Այստեղ միանգամայն տեղին է Վ. Պետրոսյանի հետևյալ դիտարկումը. «Հայկական էսքիզներից». «Մենք շատ բան ենք կորցրել պատմության խաչմերուկներում և կորցրած տարածությունը կրճատելու համար պիտի վազենք: Մենք վազում ենք ետ նայելով. անընդհատ ետ նայելով: Այդպես չի անում ոչ մի իսկական վագոդ, այդպես շատ ուրիշներ էլ, որ հիմա դեռ գալիս են հետևից, առաջ կանցնեն: Մեզ թվում է՝ բավական է ետ չնայել, և կմոռանանք մեր պատմությունը, մեր պարանոցները շատ են ծոված: Ես քեզ որոնեցի այդ վագոդի մեջ և ուզում եմ, որ դու վազես առաջ նայելով: Առաջ, իսկ անցյալը մեր արյան մեջ է, մեր ճակատագրի, մեր լոռության» (Վարդգես Պետրոսյան, Ընտիր երկեր, հ. 1. էջ 437): Ազատասիրության և քաջության, պատվաբեր մահը ծնկաչոք ապրելուց գերադասելու պատգամը մեզ տվել է դեռևս մեր անվանադիր նախահայր Հայկ նահապետը: Պատմական արդարությունը վերահաստատելու ուղին անհնարին թվալու չափ դժվար է, սակայն



դա չի կարող և չպետք է արգելք լինի այն իրականացնելու ճանապարհին: «Իր ճակատագրի դարբինն է ամեն մի ժողովուրդ: Վաղ թե ուշ նա դառնում է այն, ինչ որ ուզում է լինել այսօրԱյսօրվա նրա իդեալը –դա միաժամանակ և մարգարեացումն է, և խոստումն է այն բանի, ինչ որ վերջ ի վերջո պիտ դառնա նա»/Գ. Նճդեհ,Հատընտիր,Երևան, 2001,էջ 51/:Ուստի մեզ պետք է թոթափել անցյալի ծանր բեռը, դուրս գալ գոհի խղճահարեցնող կարգավիճակից և ուղիղ, անվարան կանգնել դժվարություններին դեմ հանդիման:

## Օգտագործված գրականություն

1. Ալաջաջյան Ստեփան Եղիայի, Եղեգները չխոնարհվեցին, Երևան 1967:
2. Գալշոյան Մուշեղ Հովեի, Մարութա սարի ամպերը, Երևան 1981:
3. Զեյթունցյան Պերճ Արմենակի, Ընտիր երկեր երկու հատորով, հատոր 2, Երևան 1987:
4. Զեյթունցյան Պերճ Արմենակի, Վերջին արևագալը, Երևան 1989:
5. Կամսարական Ս., Զյոկյուրյան Ս., Երկեր, Երևան 1984:
6. Հակոբյան Գևորգ (Ժորա) Բարսեղի, Քելե՛, լաո՛, Ջանգակ 2012:
7. Մահարի Գուրգեն (Աճեմյան), Երկերի ժողովածու 5 հատորով, հ 2, Երևան 1967:
8. Շահնուր Շահան. Երկեր, Երևան 1962:
9. Պետրոսյան Վարդգես Համագասպի, Ընտիր երկեր, հատոր 1, Երևակ 1983:
10. Սևակ Պարույր Ռաֆայելի, Երկերի ժողովածու 5 հատորով, հ. 5, Երևան 1974: